# «ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ I» ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

## ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2016թ.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Անկախ աուդիտորական եզրակացություն
2. «Վարկային Պորտֆելի Արժեթղթավորման Հիմնադրամ I» արժեթղթավորման հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունները 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
3. «Վարկային Պորտֆելի Արժեթղթավորման Հիմնադրամ I» արժեթղթավորման հիմնադրամի կառավարման մարմինների տարեկան զեկույց
4. «Վարկային Պորտֆելի Արժեթղթավորման Հիմնադրամ I» արժեթղթավորման հիմնադրամի պատասխանատու անձանց հայտարարություն

# ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

28 ապրիլի 2017թ

## Ընդհանուր նկարագիր

«Վարկային Պորտֆելի Արժեթղթավորման Հիմնադրամ I» արժեթղթավորման հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) ոչ առևտրային կազմակերպություն է՝ գրանցված ՀՀ կենտրոնական բանկում որպես արժեթղթավորման հիմնադրամ, որը հիմնադրվել է 2015 թվականի օգոստոսի 31-ին «Ակտիվների արժեթղթեվորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ բացառապես արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի թողարկման գործունեություն իրականացնելու նպատակով: Հիմնադրամը գործում է մինչև 2018 թվականի դեկտեմբերի 24-ը՝ մինչև 18 ամիս երկարաձգման հնարավորությամբ:

Հիմնադրամը 2015 թվականի դեկտեմբերի 14-ին նախաձեռնող հինգ վարկային կազմակերպություններից ձեռք է բերել ընդհանուր 495,877,138 ՀՀ դրամ և 1,258,975 ԱՄՆ դոլար մնացորդային գումարով վարկեր:

| Նախաձեռնող ՈՒՎԿ-ներ | Դրամ | Դոլար |
|---|---|---|
| «ՔԱՐԴ ԱգրոԿրեդիտ» ՓԲԸ | 164,149,621 | - |
| «Գառնի Ինվեստ» ՓԲԸ | 35,246,636 | - |
| «Գլոբալ Կրեդիտ» ՓԲԸ | 67,591,861 | 272,773 |
| «Նոր Հորիզոն» | 30,646,837 | 593,901 |
| «Կամուրջ» ՓԲԸ | 198,242,183 | 392,301 |
| **Ընդամենը** | **495,877,138** | **1,258,975** |

Հիմնադրամը նշված վարկերի ապահովմամբ թողարկեց, իսկ դեկտեմբերի 24-ին «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ միջոցով փակ աճուրդով տեղաբաշխեց 446,260,000 ՀՀ դրամ և 1,132,800 ԱՄՆ դոլար գումարի չափով ոչ փաստաթղթային, անվանական պարտատոմսեր:

| | Քանակ | 1 պարտատոմսի անվանակ արժեք | Ընդհանուր անվանական արժեք | Ժամկետը | Արժեկտրոնի դրույքը |
|---|---|---|---|---|---|
| **Դրամային** | 44,626 | 10,000 դրամ | 446,260,000 | 3 տարի | 15% |
| **Դոլարային** | 11,328 | 100 դոլար | 1,132,800 | 3 տարի | 8.5% |

Հիմնադրամը դեկտեմբերի 24-ին թողարկել է նաև հինգ դրամային և երեք դոլարային մասնակցության վկայագրեր, որոնք ձեռք են բերվել նախաձեռնող վարկային կազմակերպությունների կողմից՝ յուրաքանչյուրը իր կողմից վաճառված վարկային պորտֆելի 10%-ի չափով: Այս արժեթղթերը ստորադաս են, և դրանց դիմաց որևէ վճարում չի կատարվելու, քանի դեռ վճարված չեն պարտատոմսերի գծով վճարման ենթակա բոլոր գումարները:

| Նախաձեռնող ՈՒՎԿ-ներ | Դրամ | Դոլար |
|---|---|---|
| «ՔԱՐԴ ԱգրոԿրեդիտ» ՓԲԸ | 16,419,621 | - |
| «Գառնի Ինվեստ» ՓԲԸ | 3,526,636 | - |
| «Գլոբալ Կրեդիտ» ՓԲԸ | 6,761,861 | 30,429 |
| «Նոր Հորիզոն» | 3,076,836 | 66,054 |
| «Կամուրջ» ՓԲԸ | 19,832,183 | 43,796 |
| **Ընդամենը** | **49,617,137** | **126,175** |

Հիմնադրամի կողմից թողարկված պարտատոմսերը 2016 թվականի հունվարի 27-ին ցուցակվել են «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ ֆոնդային բորսայում և ընդգրկվել են պարտատոմսերի երկրորդային (Bbond) ցուցակում: Դրամային և դոլարային պարտատոմսերին տրվել է համապատասխանաբար LPSFB2 և LPSFB1 բորսայական հապավումը: Ցուցակման պահից թույլատրվում է պարտատոմսերով հասցեական առևտուրը և ռեպո համաձայնագրերի կնքումը: Հիմնադրամի կողմից թողարկված պարտատոմսերի շուկայի ստեղծումը (մարքեթ-մեյքինգ) իրականացվում է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի կողմից:

## Էական դեպքեր և տեղեկատվություն

**Պարտատոմսերի մարումներ**: 2016թ. թվականի մարտի 14-ին և հունիսի 14-ին Հիմնադրամը կատարել է պարտատոմսերի սեփականատերերին վճարումներ: Ստորև ներկայացվում է դրամային և դոլարային պարտատոմսերի մնացորդները հունիսի 30-ի դրությամբ և կատարված վճարումները:

| Արժույթ | Մնացորդը 31.12.15թ. | Մայր գումարի վճարումներ | | | | Արժեկտր. ընդհանուր վճարում | Մնացորդը 31.12.16թ. |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Մարտի 14 | Հունիսի 14 | Սեպտեմբ. 14 | Դեկտեմբ. 14 | | |
| Դրամ | 446,260,000 | 63,904,432 | 73,186,640 | 105,317,360 | 79,969,792 | 50,311,353 | 123,881,776 |
| Դոլար | 1,132,800.00 | 241,966.08 | 223,841.28 | 186,685 | 135,029.76 | 67,382.34 | 345,277.44 |

Վճարումների հետ կապված մանրամասն տեղեկատվությանը կարելի է ծանոթանալ հետևյալ հղումներով՝
http://capital.com.am/wp-content/uploads/2016/03/15.03.16-significant-matters-disclosure.pdf,
http://capital.com.am/wp-content/uploads/2016/06/15.06.16-significant-matters-disclosure.pdf
http://capital.com.am/wp-content/uploads/2016/11/15.09.16-significant-matters-disclosure.pdf
http://capital.com.am/wp-content/uploads/2016/12/15.12.16-significant-matters-disclosure.pdf:

**Վարկային պորտֆելի նկարագիրը**: Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում վարկերի գծով կատարվել են 319,396,384.30 դրամ և 765,424.01 դոլար գումարների չափով մարումներ,

որի արդյունքում Հիմնադրամի վարկային պորտֆելի մնացորդը կազմել է համապատասխանաբար 159,889,218.70 դրամ և 442,733.5 դոլար:

**Դրամային վարկային պորտֆելի բաշխվածությունը ըստ նախաձեռնողների**

| Նախաձեռնող ՈՒՎԿ-ներ | Ճյուղ | 31/12/15 դրությամբ | | Վարկի մարումներ | | 31/12/16 դրությամբ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Գումար | Քանակ | Գումար | Քանակ | Գումար | Քանակ |
| ՔԱՐԴ ԱգրոԿրեդիտ | Ագրո | 152,442,969.3 | 109 | 102,224,297.9 | 41 | 50,218,671.4 | 68 |
| | ՓՄՁ | 8,077,076.0 | 5 | 6,066,076.0 | 3 | 2,011,000.0 | 2 |
| Գլոբալ Կրեդիտ | Սպառ. | 65,461,915.1 | 32 | 43,782,715.9 | 12 | 21,679,199.2 | 20 |
| Գառնի Ինվեստ | Սպառ. | 31,471,233.7 | 22 | 27,480,449.1 | 14 | 3,990,784.6 | 8 |
| Նոր Հորիզոն | Ագրո | 13,553,968.0 | 9 | 6,679,717.3 | 3 | 6,874,250.7 | 6 |
| | Սպառ. | 14,993,633.7 | 17 | 9,232,073.2 | 2 | 5,761,560.5 | 15 |
| | ՓՄՁ | 1,238,440.0 | 1 | 1,042,950.0 | 0 | 195,490.0 | 1 |
| Կամուրջ | Սպառ. | 70,676,560.8 | 50 | 47,169,277.9 | 20 | 23,507,282.9 | 30 |
| | ՓՄՁ | 121,369,806.4 | 53 | 75,718,827.0 | 19 | 45,650,979.4 | 34 |
| **Ընդամենը** | | **479,285,603.0** | **298** | **319,396,384.3** | **114** | | **184** |

**Դոլարային վարկային պորտֆելի բաշխվածությունը ըստ նախաձեռնողների**

| Նախաձեռնող ՈՒՎԿ-ներ | Ճյուղ | 31/12/15 դրությամբ | | Վարկի մարումներ | | 31/12/16 դրությամբ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Գումար | Քանակ | Գումար | Քանակ | Գումար | Քանակ |
| Գլոբալ Կրեդիտ | ՓՄՁ | 261,734.88 | 43 | 156,840.56 | 13 | 104,894.3 | 30 |
| Նոր Հորիզոն | Ագրո | 410,007.16 | 79 | 313,038.90 | 38 | 96,968.3 | 41 |
| | ՓՄՁ | 151,445.77 | 36 | 108,430.85 | 13 | 43,014.9 | 23 |
| Կամուրջ | Ագրո | 178,132.00 | 56 | 86,058.70 | 11 | 92,073.3 | 45 |
| | Սպառ. | 82,690.71 | 24 | 34,020.00 | 3 | 48,670.7 | 21 |
| | ՓՄՁ | 124,147.00 | 28 | 67,035.00 | 6 | 57,112.0 | 22 |
| **Ընդամենը** | | **1,208,157.52** | **266** | **765,424.01** | **84** | **442,733.5** | **182** |

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Պարտատոմս/Վարկային պորտֆել հարաբերակցությունը դրամային և դոլարային պարտատոմսերի համար կազմել է համապատասխանաբար 77.5% և 78.0%:

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ առկա են 30 դրամային ժամկետանց վարկեր՝ 38,355,507 դրամ մնացորդով և 22 դոլարային ժամկետանց վարկեր՝ 83,775.2 դոլար ընդհանուր մնացորդով:

**Դրամային ժամկետանց վարկերի բաշխվածությունը առ 30/06/16թ.**

| ՈՒՎԿ | Ճյուղ | Ընդամենը ժամկ. Վարկեր | | Ժամկ. գումար | Ժամկ. տոկոս | Մինչև 90 օր ժամկ. | | 90 օրից ավել ժամկ. | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Գումար | Քանակ | | | Գումար | Քանակ | Գումար | Քանակ |
| ՔԱՐԴ Ագրո Կրեդիտ | Ագրո | 18,449,446 | 16 | 7,252,770 | 861,995 | 5,909,201 | 7 | 12,540,245 | 9 |
| | ՓՄՁ | 1,111,000 | 1 | 186,194 | 34,953 | 1,111,000 | 1 | 0 | 0 |
| Գլոբալ Կրեդիտ | Սպառ. | 3,450,123 | 2 | 1,425,827 | 237,638 | 0 | 0 | 3,450,123 | 2 |
| Գառնի Ինվեստ | Սպառ. | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Նոր Հորիզոն | Ագրո | 1,217,845 | 1 | 66,545 | 19,350 | 1,217,845 | 1 | 0 | 0 |
| | Սպառ. | 595,631 | 1 | 96,108 | 9,885 | 595,631 | 1 | 0 | 0 |
| | ՓՄՁ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Կամուրջ | Սպառ. | 3,506,820 | 3 | 1,132,270 | 360,399 | 869,990 | 1 | 2,636,830 | 2 |
| | ՓՄՁ | 10,024,642 | 6 | 3,070,622 | 862,989 | 762,360 | 1 | 9,262,282 | 5 |
| **Ընդամենը** | | **38,355,507** | **30** | **13,230,336** | **2,387,208** | **10,466,026** | **12** | **27,889,481** | **18** |

**Դոլարային ժամկետանց վարկերի բաշխվածությունը առ առ 30/06/16թ.**

| ՈՒՎԿ | Ճյուղ | Ընդամենը ժամկ. Վարկեր | | Ժամկ. գումար | Ժամկ. տոկոս | Մինչև 90 օր ժամկ. | | 90 օրից ավել ժամկ. | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Գումար | Քանակ | | | Գումար | Քանակ | Գումար | Քանակ |
| Գլոբալ Կրեդիտ | ՓՄՁ | 21,043.9 | 4 | 3,640.6 | 1,006.3 | 12,402.1 | 2 | 8,642 | 2 |
| Նոր Հորիզոն | Ագրո | 9,194.5 | 1 | 297.5 | 145.1 | 9,194.5 | 1 | 0 | 0 |
| | ՓՄՁ | 5,366.8 | 1 | 1,286.8 | 69.0 | 5,366.8 | 1 | 0 | 0 |
| Կամուրջ | Ագրո | 32,424.0 | 10 | 9,952.0 | 2,401.5 | 5,328.0 | 2 | 27,096 | 8 |
| | Սպառ. | 12,532.0 | 5 | 3,450.0 | 1,018.4 | 1,023.0 | 1 | 11,509 | 4 |
| | ՓՄՁ | 3,214.0 | 1 | 471.0 | 80.5 | 0.0 | 0 | 3,214 | 1 |
| **Ընդամենը** | | **83,775.2** | **22** | **19,097.9** | **4,720.8** | **33,314.4** | **7** | **50,461** | **15** |

**Վարկերի հետ գնում**: Համաձայն նախաձեռնողների հետ կնքած՝ Ակտիվների առուվաճառքի և սպասարկման պայմանագրի՝ նախաձեռնող վարկային կազմակերպութունները հետ են գնում իրենց կողմից վաճառվածը դեֆոլտ վարկերը որոշակի պայմանների դեպքում: Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում հետ է գնվել 161,521 ԱՄՆ դոլար մնացորդով 25 վարկ և 5,108,277 դրամ մնացորդով 4 վարկ:

Մասնակցության վկայագրերի հաշվարկային ընթացիկ արժեքը անվանական արժեքի 30% և պակաս նվազելու դեպքում նախաձեռնողները պարտավոր են դեֆոլտ վարկեր հետ գնել այն չափով, որը թույլ կտա հետգնման օրվա դրությամբ մասնակցության վկայագրերի ընթացիկ արժեքը հավասարեցնել դրանց անվանական արժեքի առնվազն 30%-ին: Ստորև ներկայացված են դրամային և դոլարային մասնակցության վկայագրերի ընթացիկ

արժեքները՝ հաշվարկված 31.12.16թ. դրությամբ յուրաքանչյուր նախաձեռնողի համար:

Դրամային

| ՈՒՎԿ | ՄՎ անվ. արժեքը | Անվ. արժեքի շեմը (30%) | Նվազեցումներ | | | ՄՎ ընթացիկ արժեքը | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Ժամկետանց գումարներ | Դուրս գրված | Ընդամենը | Գումարով | Տոկոսով |
| ՔԱՐԴ Ագրո Կրեդիտ | 16,419,621 | 4,925,886 | 8,318,400 | 50,000 | 8,368,400 | 8,051,222 | 49.0% |
| Գլոբալ Կրեդիտ | 6,761,861 | 2,028,558 | 743,150 | 2,360,315 | 3,103,465 | 3,658,396 | 54.1% |
| Գառնի Ինվեստ | 3,526,636 | 1,057,991 | 61,270 | - | 61,270 | 3,465,366 | 98.3% |
| Նոր Հորիզոն | 3,076,836 | 923,051 | 191,887 | 428,134 | 620,021 | 2,456,815 | 79.8% |
| Կամուրջ | 19,832,183 | 5,949,655 | 5,426,279 | 999,482 | 6,425,761 | 13,406,422 | 67.6% |

Դոլարային

| ՈՒՎԿ | ՄՎ անվ. արժեքը | Անվ. արժեքի շեմը (30%) | Նվազեցումներ | | | ՄՎ ընթացիկ արժեքը | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Ժամկետանց գումարներ | Դուրս գրված | Ընդամենը | Գումարով | Տոկոսով |
| Գլոբալ Կրեդիտ | 27,373 | 8,212 | 1,903 | 5,940 | 7,844 | 19,529 | 71.3% |
| Նոր Հորիզոն | 59,401 | 17,820 | 1,798 | - | 1,798 | 57,603 | 97.0% |
| Կամուրջ | 39,401 | 11,820 | 17,373 | 1,250 | 18,623 | 20,778 | 52.7% |

## Հիմնական ռիսկերը

Հիմնադրամի գործունեության վրա ազդող ռիսկերը բացահայտված են Հիմնադրամի կողմից թողարկված պարտատոմսերի ազդագրում, և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ առկա չեն բացահայտված ռիսկերից շեղումներ:

«Վարկային Պորտֆելի Արժեթղթավորման Հիմնադրամ I»-ի Կառավարիչ

«Կապիտալ Ինվեստմընթս» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն

Տիգրան Կարապետյան